ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

Լրացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի ծննդյան 60 և գիտական գործունեության 40-ամյակը: Ծնվել է 1918 թ. մայիսին, Երևանում, մտավորականի ընտանիքում:

1935 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցը և նույն տարում էլ ընդունվել Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը: Արդեն ուսանողական տարիներին ձևավորվում են ապագա ակադեմիկոսի գիտական նախասիրությունները. հայ ժողովրդի պատմությունը՝ ընդհանրապես, հայ ձեռագրերի աշխարհը՝ հատկապես: 1940 թ. Լ. Խաչիկյանը ավարտում է համալսարանը: Արդեն ուսանողական տարիներին գրված մի քանի հոդվածները աներկբայելիորեն նշում էին նրա կյանքի հետագա ճանապարհը. նա դառնում է մեծանուն Հ. Մանանդյանի ասպիրանտը և գործի անցնում Մատենադարանում, որտեղ աշխատում է 1940—1951 թթ., սկզբում որպես բիբլիոգրաֆ, ապա՝ ձեռագրերի բաժնի վարիչ: 1945 թ. Լ. Խաչիկյանը պաշտպանում է իր թեկնածուական դիսերտացիան՝ «Եղիշեի Առարածոց մեկնությունը»:

1951—1954 թթ. Լ. Խաչիկյանը աշխատում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, ապա՝ հրապարակումների բաժնի վարիչ: Սակայն 1954 թ. նա դարձյալ Մատենադարանում է, և այդ ժամանակվանից մինչև այսօր, շուրջ 25 տարի, նրա անփոփոխ տնորենն է: Լ. Խաչիկյանի շուրջ 40 տարվա աշխատանքային գործունեությունից 35-ն, այսպիսով, անցել է Մատենադարանում: Այստեղ է նա ձևավորվել ու աճել որպես գիտնական, մարդ, քաղաքացի: 1961 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիան. 1963 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ. 1966 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1968 թ.՝ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1971 թ. Լ. Խաչիկյանը ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ:

Լ. Խաչիկյանը ավելի քան 60 աշխատության հեղինակ է: Ինչո՞վ է բնութագրվում նա որպես գիտնական: Նրա աշխատությունների բիվը կարող էր կրկնակի լինել, չի եղել: Պատճառը երկար տարիների ծանրաբեռնված զբաղվածությունն է վարչական և գիտության կազմակերպման աշխատանքով, բայց, թերևս ավելի շատ, նրա խստապահանջությունն է իր իսկ նկատմամբ: Նրա բոլոր գործերը, անգամ հոդվածներից յուրաքանչյուրը, տևական, նույնիսկ շատ տևական աշխատանքի արդյունք են: Երկար տարիների ընթացքում համբերությամբ ու հետևողականությամբ, բազմաբնույթ ձեռագրերից կաթիլ-կաթիլ հավաքվում են փաստերը, ապա հանդարտ, անշտապ իմաստավորվում և նոր միայն հանձնվում թղթին:

Մի գիծ ևս բնութագրական է Խաչիկյան-գիտնականի համար: Որպես աղբյուրագետ նա միշտ ձգտել է հայտնաբերել ու հրապարակել նոր աղբյուրներ, հարստացնել հայագիտության աղբյուրագիտական բազան: Եվ այս բնա-

գավառում, իրոք, մեծ է նրա ներդրումը գիտության մեջ: Լ. Խաչիկյանի ոչ միայն աղբյուրագիտական հատուկ հրապարակումները, այլ մյուս գործերը ևս միաժամանակ նաև նոր նյութերի, նոր փաստերի հրապարակումներ են: Այս փաստերն ու նյութերը մտել են գիտական լայն ու կայուն շրջանառության մեջ:

Լ. Խաչիկյանը գիտության մեջ նոր ուղիներ, նոր արահետներ բացող գիտնական է: Նրան խորթ է գիտության մեջ արդեն քննարկված հարցերը նորից քննարկելու միտումը: Երբ նա անդրադառնում է այսպիսի հարցերի, ապա միայն այն դեպքում, երբ անվիճելի փաստեր ունի դրանց լուծման համար: Լ. Խաչիկյանի աշխատությունները նվիրված են այնպիսի խնդիրների, որոնք կամ բնավ ուսումնասիրված չեն և կամ արծարծված են շատ անբավարար ձևով. իր գործերով նա դուռ է բացում տվյալ բնագավառում հետազոտությունները շարունակելու համար: 1947 թ. Լ. Խաչիկյանը հրատարակում է «Դիահերձումը հին Հայաստանում» հոդվածը: Կարևորը ոչ միայն փաստի հրապարակումն էր, այլև այն, որ արժեքավորվել էր փաստը և ցույց տրվել նրա նշանակությունը: Լ. Խաչիկյանն արդեն սրել էր հայագետների ուշադրությունը նման փաստերի վրա, և ահա որոշ ժամանակ անց ուրիշ գիտնականներ նույնպես հրապարակում են նման փաստեր: 1951 թ. Լ. Խաչիկյանը պատրաստում է մի հոդված՝ «Երզնկայում 1280 թ. կազմակերպված «Եղբայրությունը», որի կանոնադրությունը հայտնաբերել էր ինքը (հրատարակեց 1962 թ.): Նա ցույց էր տվել եղբայրությունների կարևոր դերը հայ ժողովրդի ներքին կյանքում և դրանց վերաբերող հարցերի պարզաբանման անհրաժեշտությունը: Լ. Խաչիկյանի նշված հոդվածից հետո այդ թեման սկսեց ավելի լայնորեն արծարծվել ուսումնասիրություններում:

Լ. Խաչիկյանը սոսկ փաստեր ժողովող ու աղբյուրներ հրատարակող չէ: Նա պատմաբան է իր էությամբ, ունի քննախույզ միտք, վերլուծելու, ընդհանրացնելու կարողություն: Նշված ու մի շարք այլ հատկությունների հետևանքով նրա գործերը արմատապես մտել են գիտության մեջ: Ժամանակագրական ընդգրկման առումով նրա գործերը վերաբերում են վաղ և ուշ միջնադարին: Թեմատիկան նույնպես որոշակի է. հայ մշակույթի պատմություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, քաղաքական պատմություն, աղբյուրագիտություն:

Վաղ միջնադարին վերաբերող գործերից նշենք ևս մի քանիսը. «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար)» (Երևան, 1951 թ.): Այս գործը բարձր է գնահատվել (տե՛ս, օրինակ, Լ. Բաբայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970, էջ 392—395) և իրավամբ. սովետահայ պատմագրության մեջ այն ընդհանրապես առաջին գործերից է՝ նվիրված սոցիալական շարժումներին միջնադարյան Հայաստանում: Այս աշխատության մեջ Լ. Խաչիկյանը հրատարակել է նաև (որպես մեկը սոցիալական շարժումների ուսումնասիրման աղբյուրներից) Դանգրուլի ժողովի կանոնները: Դա մի ուսանելի օրինակ է ոչ միայն կանոնական որևէ բնագրի գիտահամեմատական տեքստ պատրաստելու, այլև այն աշխատանքի, որով ցույց է տրվել, թե ինչպես են ստեղծվել այդ կանոնները, հասարակական ինչ պահանջմունքների արդյունք էին և ինչ հարցերի պատասխանելու էին

կոչված: Դու առաջին նմանօրինակ ուսումնասիրությունն էր սովետահայ պատմագրության մեջ:

Դարձյալ IV դարին են վերաբերում հետևյալ գործերը. «Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք» («Բանբեր Մատենադարանի», № 7), «Օտարալեզու հայ գրականությունը IV դարում» («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3), «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը» («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4):



Լ. Խաչիկյանի գործերի մեծ մասը, այնուամենայնիվ, վերաբերում է ուշ միջնադարին և հատկապես XIV—XV դդ.: 1974 թ. նա հրատարակում է «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում XII—XIV դարերում» ուսումնասիրությունը (սովետահայ պատմագրության մեջ նման հարցին նվիրված առաջին մարքսիստական գործն է), 1956 թ.՝ «Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը»: Քիչ չեն միջնադարյան մեր այնպիսի մատենագիրները, որոնք իրենց ժամանակ մեծ դեր են կատարել, թողել են հարուստ գրական-գիտական ժառանգություն, բայց հետագայում, մասնավորապես մեր օրերում, կամ մոռացության են տրվել և կամ պատշաճ ուշադրության չեն արժանացել. օրինակ՝ Սարգիս Շնորհալի, Հակոբ Կլայեցի, Բարսեղ Մաշկևոր և այլ: Սրանց գործերը, բնականաբար, կրոնական-աստվածաբանական են: Բայց, ինչպես իրավացիորեն նշում է Լ. Խաչիկյանը, որ հիմնավորապես ծանոթ է մեծ մասամբ անտիպ և հարյուրավոր ձեռագրերում սփռված նրանց գործերին, «դրանց մեջ հսկայական օգտակար նյութ կա գրանցված»: XIV դ. երկրորդ կես—XV դ. առաջին տասնամյակներում ապրած Մատթեոս Ջուղայեցին մեկն է այդպիսի հեղինակներից: Լ. Խաչիկյանը տվել է Ջուղայեցու հնարավոր մանրամասն կենսագրությունը, գործերի ցուցակը, գիտական գնահատականը, այլև մասամբ շրջանառության մեջ է դրել, մասամբ՝ մատնացույց արել տեղերը միջնադարյան մեր ներքին կյանքի ուսումնասիրության համար չափազանց կարևոր բազմաթիվ փաստերի, որ սփռված են նրա գործերում: 1958 թ. լույս է տեսնում «XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին» ուսումնասիրությունը: Խաչիկյանը շեշտը դրել է գյուղական համայնքի հետ կապված այնպիսի հարցերի վրա, որոնք նախորդ ուսումնասիրողների կողմից կամ չեն քննարկվել, կամ շոշափվել են շատ հպանցիկ: Առանձնապես պետք է հիշատակել «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածը: Հայերեն ձեռագրերի, հատկապես կրոնական բովանդակության գրչագրերի դատարկ էջերին ու լուսանցքներին միջին դարերում գրանցվել են նաև նվիրատվական արձանագրություններ, պայմանագրեր, կալվածագրեր, մուրհակներ և տնտեսական այլ գործարքների մասին ուշագրավ վավերագրեր: Հայտնի է, որ հայկական

միջնադարյան մատենագրությունը շատ աղքատ է ժողովրդի ներքին կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող տեղեկություններով: Այս պայմաններում ինքնին հասկանալի է, թե մեր պատմության այդ կողմերը ուսումնասիրելու համար ինչ հսկայական նշանակություն ունեն այդօրինակ գրառումները: Երկու խոսք Լ. Խաչիկյանի ամենավերջին գործերից մեկի՝ «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը» ուսումնասիրության մասին: Երկար տարիների ընթացքում բազմաթիվ ձեռագրերից հավաքված կցկտուր փաստերը ի մի բերելով ցույց է տվել հայկական մի իշխանության գոյությունը XIV—XV դդ. ընթացքում, նրա հերոսական ու օրհասական պայքարը նվաճողների դեմ, Ծործորի դպրոցի դերը, Հովհաննես Ծործորեցու եկեղեցաքաղաքական և գրական դիմանկարը իր գործերի լրիվ ցանկով, այն Ծործորեցու, որ հայագիտության մեջ երկար ժամանակ նույնացվել է Հովհաննես Երզնկացու հետ և որոնց տարորոշելու հարցում առաջին խոսքը դարձյալ Լ. Խաչիկյանն է ասել: Նկարագրել է դավանաբանական պայքարի դրվագները ունիթոռների ու հայրենի ավանդության հավատարիմ խմբակցությունների միջև ու ցույց տվել, որ այդ իշխանության կործանումը և այդ շրջանի հայության վերացումը, վերջին հաշվով, դավանափոխության հետևանք էր:

Լ. Խաչիկյանի գիտական վաստակի մեջ պատկառելի տեղ են գրավում այն սկզբնաղբյուրները, որ տարիների ընթացքում ձեռագրերի միջից հայտնաբերել ու գիտական շրջանառության մեջ է դրել նա, թվարկենք միայն. 1. «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ» (1941 թ.): 2. Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը (1943 թ.): 3. Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերեն թարգմանությունը (1949 թ.): 4. Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը առաքված Արևելյան Հայաստան 1251 թ. (1958 թ.): 5. Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.) (1962 թ.): 6. Սարգիս աբեղայի ուղեգրությունը (1970 թ.): 7. Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի (1971 թ.): 8. Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների ժամանակագրությունը (1972 թ.): 9. Յովհաննէս Քռնեցի, Յաղագս քերականին (1977 թ.): Հայտնի է, որ միջնադարյան հայ քերականները եղել են հույն քերական Դիոնիսիոս Թրակացու գործի մեկնիչները միայն և հունարենի փաստերով են բացատրել հայերենի քերականական իրողությունները: Հովհաննես Քռնեցին, որ իր այս գործը շարադրել է XIV դարի 30-ական թթ., առաջին հայ քերականն է, որ խախտել է այդ ավանդույթը և գրել հայերենի առաջին գիտական քերականությունը, իսկ նշված հրատարակությամբ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում չափազանց արժեքավոր այդ բնագիրը:

Այս հրատարակությունների շարքում, հարկավ, առանձին խոսք պետք է ասվի հիշատակարանների մասին: Լ. Խաչիկյանը շուրջ 26 տարի նվիրել է հայերեն ձեռագրերից հիշատակարաններ հավաքելու գործին և հրատարակել է. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950 թ., 845 հիշատակարան), «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ». մասն Ա (1955 թ., 744 հիշատակարան), մասն Բ (1958 թ., 575 հիշատակարան) և մասն Գ (1967 թ., 814 հիշատակարան): Այսպիսով, հրատարակել է շուրջ 3000 հիշատակարան. ահռելի քանակություն, որ պահանջել է շատ ժամա-

նակ և խլել է աչք կուրացնող ու հոգի մաշող մեծ աշխատանք: Այդ շորս ստվար հատորները այնքան հարուստ, բազմազան նյութեր են պարունակում, որ հայ ժողովրդի XIV—XV դդ. պատմության շատ ու շատ հարցերի մասին այսօր դժվար է լուրջ խոսք ասել առանց այդ հիշատակարանների: Այնպես որ, դրանց հրատարակումը միայն արդեն բավական էր մեծապես գնահատելու Լ. Խաչիկյանի արածը հօգուտ հայագիտության: Սակայն նա արել է ավելին. Խաչիկյանը գրեց հայ ժողովրդի XV դարի պատմությունը և դա նրա ծանրակշիռ ներդրումն է հայագիտության մեջ: Այս ամենի համար էլ Լ. Խաչիկյանը 1969 թ. արժանացել է ՀՍՍՀ ԳԱ բարձրագույն պարգևին՝ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակին, որի առաջին դափնեկիրն է:

Նշանակալի է նաև Լ. Խաչիկյանի՝ որպես ղեկավարի աշխատանքը: Նրա տնօրինության տարիներին Մատենադարանի ձեռագրական ֆոնդերը աճել են 5471 միավորով (առ 1. I. 1955 թ.՝ 10249, առ 28. IV. 1978 թ.՝ 15720): Մեծ աճ է, որին հասնելու համար, սակայն, պահանջվել է շատ ավելի մեծ աշխատանք ու ջանք:

Խաչիկյան-գիտնականի ու ղեկավարի բնութագիրը ամբողջական չի լինի, եթե մի քանի խոսք չասվի նրա մասին որպես խմբագրի: Շուրջ 25 տարի է, որ նա Մատենադարանի «Բանբերի» գլխավոր խմբագիրն է: Այդ տարիների ընթացքում լույս է տեսել «Բանբերի» 10 ստվարածավալ հատոր, որոնցից յուրաքանչյուրն առանձնաբար և շարքն ամբողջությամբ լուրջ ներդրում է հայագիտության մեջ: Իհարկե, «Բանբերի» գիտական մակարդակը պայմանավորված է սովետական հայագիտության զարգացման բարձր աստիճանով. այդուհանդերձ, եթե այն գիտական աշխարհում ունի ծանրակշիռ հրատարակության համարում, ապա դրանում շատ նշանակալի է այն խստապահանջությունը, որով ընտրվում է տպագրվելիք նյութը, այն հոգեվեր աշխատանքը, որ թափում է յուրաքանչյուր հատորի վրա նրա խմբագիրը:

Կոմունիստ գիտնականը միաժամանակ նաև ակտիվ քաղաքացի է: Նա Երևանի քաղսովետի դեպուտատ է, ՍՍՀՄ ԳԱ Հնագրական հանձնաժողովի և «Արևելյան մատենագրության հուշարձաններ» միութենական շարքի խմբագրական կոլեգիայի անդամ, ՍՍՀՄ—Իրան բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ, Սփյուռքահայության մշակութային կապի կոմիտեի և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերության նախագահության անդամ և այլն: Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել ակադեմիկոս Լ. Խաչիկյանի վաստակը պատմագիտության բնագավառում և ծննդյան 60-ամյակի առթիվ նրան շնորհել են մեր պետության բարձրագույն պարգևներից մեկը՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը:

Խ. ԹՈՐՈՍՅԱՆ